

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱՆ

Տարեկան . . 12 ծր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 ծր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծրար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրարացման տողը

20 սանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Փ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՃՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA Roumèlie

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

ՔԻՐԻԼ ԵՒ ՄԷԹՈՏ

Այսօր ամբողջ Սլաւ աշխարհը մեծագոյն ոգևորութեամբ կը տօնէ այս երկու հարազատներու յիշատակը. ասոնց կը վերագրուի յօրինումը սլաւական տառերուն, որոնցմով այսօր հարիւր միլիոնէ պէնի հաշուող պաւ ազգերու լուսաւորութեան հիմը դրած են. կարծէ հոս քանի մը տողով մեր ընթերցողաց վերոյիշեցնել այդ երկու սուրբերու մեծ դերը:

Քիրիլ և Մէթոմ երկու եղբայրներ թ. դարու առաջին քառուղին ծնած են Սլեւնիկի մէջ. կըսուի թէ յոյն ծնողներէ. իրենց ուսումը առած են Կ. Պոլսոյ մէջ. հոն Քիրիլ՝ Այա Սօֆիա Գրատան պաշտօնեայ եղած է և քահանայ ձեռնադրուած: Հռչակ հանած է պատկերամարտութեան դէմ՝ իր վիճաբանութիւններովը: Մօրավիոյ իշխանը 862ին Միքայէլ կայսրէն նամակաւ մը խնդրած է քարոզիչներ զրկել իր երկիրը, հոն Սլաւ ժողովուրդը Քրիստոնէութեան դարձնելու և Յիսուսի Ա. ետարանք քարոզելու համար: Կայսրը Քիրիլ և Մէթոմ երկու հարազատները զրկած է հոն: Այդ օրէն ասոնք ձեռնարկած են սլաւական տառերու յօրինման կամ ամբողջացումին. և սկսած են թարգմանութիւններու, որով սիրալիր ընդունելութիւն և յաջողութիւն գտած են Մօրավիոյ ժողովուրդին մէջ:

Բայց Գերմանացի կղերականներ անոնց յաջողութենէն գրգռուած, ամբաստանած են Հռովմայ եկեղեցական բարձրագոյն ժողովոյ առջեւ, յարելով թէ նորութիւններ կը մտցնեն քրիստոնէական քարոզութեան մէջ, թէ Սլաւ բարբառներու լեզուով եկեղեցական արարողութիւններ կը կատարեն և այլն: Որովհետեւ այդ դարերուն Հռովմայ Պապին պաշտօնէն արձակուած վճիռները աշխարհապաշտութեան ու թագաւորներու իսկ սարսուռ կազդէին և ամբողջ քրիստոնեայ աշխարհը պարտաւորուած էր Պապին հրամաններուն ոչխարային համակերպութիւն ցոյց տալ. ստիպուեցան Քիրիլ և

Մէթոմ եւս Հռովմ երթալ ու դատաստան ընդունիլ: Յովհաննէս Ը. Պապը զանոնք ունկնդրելով, ան մեղ գտաւ և Մօրավիոյ թեմին եպիսկոպոս Կարգեց Մէթոմը, արտօնելով որ սլաւական լեզուով եկեղեցական ամեն արարողութիւն կատարէ:

Մէթոմ Մօրավիոյ եպիսկոպոս կարգուելէ վերջ շուրջ 15 տարի ապրեցաւ, մինչդեռ երէց եղբայրը Քիրիլ քարոզչական ու գրական ծանր աշխատութիւններէ յոգնած, վաղ քաշուելով աւելի կանուխ վախճանած էր: Մէթոմ իր եպիսկոպոսական լիազօր պաշտօնին մէջ որչափ որ ալ հակառակօրէնք ունեցաւ, կրցաւ թէ՛ այդ հակառակօրէնքներն դէմ կռուիլ և թէ բոլոր սլաւախոս ժողովուրդներուն մէջ քրիստոնէութեան հետ սլաւ գրականութիւնը և քաղաքակրթութիւն տարածել:

Այս երկու հարազատները ոչ թէ միայն Սլաւներէն սրբոց կարգը դասուած են, այլ ամբողջ օրթօ. տօքս և կաթոլիկ եկեղեցիները կը տօնեն անոնց յիշատակը առանել կամ նուազ յարգանքով:

Քիրիլ և Մէթոմի կատարած մեծ դերը կը համապատասխանէ մեր Սահակայ և Մեսրոպայ դերին. բայց անոնց կրած հալածանքը՝ մեր թարգմանիչ Սուրբ Հայրերուն դէմ յունական ֆանատիկոսութեան հանած հալածանքէն շատ մեղմ եղած է: Մերին. ներք աւելի հին և աւելի բարբառ. իրիկ դարու մէջ ապրելով ալ աւելի կշտամբուած ու հայածուած են. սակայն եղական և աննկուն հաստատամտութեամբ, անձնուէր հայրենասիրութեամբ յաջողած են իրենց մեծ ձեռնարկը գլուխ հանել և Հայերէն գաղափարները արագի ալ թիւղանդական և Սլաւասանան յափշտակիչ ճիւղներէն ազատել թէ՛ բարոյապէս և թէ մասամբ քաղաքականապէս. այնպէս որ բնաւ սխալ չէ ըսել թէ մենք մեր ազգային գոյութիւնը լեզուով, գրականութեամբ ու եկեղեցիով կը պարտինք Սահակին և Մեսրոպին:

Այսօր երբ ականատես կըլլանք պուրջ ժողովուրդին, նոյնպէս բոլոր Սլաւներուն, կատարած խանդավառ հանգէսներուն, ուր եկեղեցական, քաղաքական և զինուորական ամեն տեսակ ցոյցեր կը կատարուին ու յարգանքներ կը շնորհակցին ի յիշատակ Քիրիլի և Մէթոմի, բնականապէս չենք կրնար առանց սրտի մորմոքումի շանդադառնալ յիշատակին մեր Ս. Թարգմանչաց, որոնց շիրիմները իսկ, աւա՛ղ, այսօր քարուքանդ եղած են բարբարոս կառավարութեան մը արձակած վանդակներուն ձեռքով. և ամբողջ հայ ազգը ան կարող կը գտնուի ըստ պատշաճին վերականգնելու այդ խնկիլ դամբարանները, այն վախով թէ վաղը կրկին կը քանդուին: Ուստի առայժմ գոնէ մեր սրտերուն մէջ կանգուն թող մնան անոնք. տօնենք խանդավառութեամբ այդ Սուրբ Հայրերուն յիշատակը, աշխարհի որ կողմն որ ալ գտնուինք, միշտ մեզ նպատակէտ ունենալով մեր նախնիքներու սրբազան ոսկորները պիղծ ոտքերով: Կոխտուռէն ազատի ամեն գնով:

ԳՈՒՐՊԷՅ

ԽՄԲՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ

Բոյ Արմենիայի վերջին թիւին մէջ հրատարակուած Անդրանիկի մէկ նամակին հետեւեալ մասերը թարգմանաբար կարտատպենք:

... Մենք ամէն ջանք ի գործ դրինք նոր ընկերներ գտնելու, պաշտպանութեան մի քանի նախապատրաստութիւններ ընելու և Ս. Առաքելոց վառքին մէջ ապաստանելու համար. բայց կառավարութիւնը մեզ միջոց չը ձգեց. մենք դեռ մեր պատրաստութիւնները չը տեսած պաշարուեցանք: Այն օրերուն մենք չորս կամ հինգ ընկերներ եւս ունեցած էինք. թշնամին մեզ ձերբակալելու գնդով, սկսաւ յարձակումը. երկու մարդ կորսնցուցինք, մին մեր հին ընկերը Յարութիւն. Հուրուխցի, միւսը Ղազար Խիչօեան կէլիկիւ. զանցի. պաշարումը շարունակեց 20 օր: Մեզ ամեն կողմէ պաշարող

թշնամին 50ի չափ մարդ կորսնցուց, ոմանք սպաննուեցան, ոմանք ցուրտէն սառեցան. հիւանդանոցները դեռ հիւանդներով լեցուն են և անոնց մէջ միշտ մահը անպակաս է: Չորրորդ օրը սկսեցինք կառավարութեան հետ բանակցութեան, նախ նամակ մը մեզ ուղղուեցաւ առաջնորդին միջոցաւ, որպէս զի սա ամեն միջոցներով մեր անձնատուութիւնը յաջողցնէ կամ թէ մեզ պարտաւորեցնէ վառքէն հեռանալու: Մենք ոչ մի կարեւորութիւն չը տուինք այդ նամակին, և անոր պատասխանելու համար երեք օր պայմանաժամ ուղեցինք. կառավարութիւնը, մեզ վախցնելու նպատակաւ, վառքին առաջնորդը մեր քով զրկեց, որ մեր վերջին պատասխանը կուգէր առնել. մենք կրկին պատասխանեցինք թէ մեր առաջարկութիւնը շատ թեթեւ է, մեզ միայն երեք օր պայմանաժամ տալ պէտք է, եթէ ոչ կառավարութիւնը ազատ է ուզած կերպովը շարժելու: Նոյն գիշերը ժամը 2ին թշնամին սկսեց վառքին վրայ յարձակիլ, ասանց իր նպատակին կրնալ հասնելու:

Հրացանաձգութիւնը տեւեց երեք օր անընդհատ. յետոյ կրկին մեզմէ պատահաւորաւ ուղեցին: Առաջնորդները որ գոմիսէր մը և երկու առաջնորդները գան մեր նպատակը հասկնալու:

Դէպքին տասնեւմէկերորդ օրը եկան երկու գոմիսէրներ և երկու առաջնորդները. զանոնք ընդունեցինք և մեր տեսակցութիւնը երեք ժամ տեւեց. այս կերպով իմացանք անգլիական հիւպատոսին քաղաք վերադարձը, նոյնպէս մեր պահանջումին մերժումը՝ ուստի հիւպատոսին կողմէ ըլլալը օրթօտօք ստիճան պատճառաւ. ուստի փոխեցինք մեր ծրագիրը և յայտարարեցինք թէ մեր նպատակն է անձնագոհ ըլլալ պաշտպանելու համար մեր ազգին իրաւունքները, և եթէ մեր սա պահանջները չընդունուին, մինչեւ մեր մահը պիտի կռուինք:

Ա. Բոյոր քաղաքական բանառարկեալներուն ընդհանուր ներում:

Բ. Տուգանք վճարել Սպաղանքի

հրդեհին և մեռելներուն, Հիթան և Շուշնամարդ գիւղերու հրդեհ- ուածներուն և անմեղ մարդոց սպա- նութեանց փոխարէն .

Գ. Գիւղերը օրէնքի համեմատ կառավարել .

Դ. Հատուցում այն հարստահա- րութեանց և սպանութեանց հա- մար որոնք գործուեցան զաշտին մէջ, ուր 50 կամ 60 անձերէ աւելի սպաննուած են այս տարւոյ մէջ կառավարութեան հրամանաւ .

Մեր այս յայտարարութիւնները արդար գտան և խոստացան Սուլ- թանին և Պատրիարքին հեռագրել մեր պահանջներուն գոհացում տա- լու համար : Անոնց հասկցուցինք թէ մենք միայն վանքը կը ձգենք, երբ մեր բողոքներու պատասխանը մեզ հասնի կնքուած Սուլթանէն, Պոլսոյ դեսպաններէն և Պատ- րիարքէն : Այս կերպով եկած պա- տասխանը կրնայ հաւատացնել թէ մեր ձայնը լսուած է, և մենք զանի վաւերական նկատելով, այն ատեն միայն կը հեռանանք վան- քէն :

Մեր բոլոր առաջարկութիւն- ները ընդունեցին և մեկնեցան : Ուր օր յետոյ, Մեծ-Վէզիրէն հաստատուած հեռագիր մը ստա- ցանք Պատրիարքէն, որ կիմացնէր թէ մեր Սուլթանին հնազանդու- թիւնը մեզ օգտակար կըլլայ և մեր պահանջները կիրաւորուին :

Տեսնելով թէ այդ կերպ առա- ջարկ մը չէր համապատասխաներ մեր պահանջներուն, միջոց փոփոխե- ցինք դուրս ելնելու :

Արդէն երկու օրէ ի վեր զի- նուորները վերստին հաւաքուած էին . անոնցմէ երկուքը սպաննե- ցինք : Իմացուցինք թէ հեռագիրը երբէք գոհացուցիչ չէ և թէ կա- ռավարութեան նոյն պատուիրակ- ները վերստին գալու են : Միեւնոյն գիշերը, ժամը 3ին, վանքը ձգե- ցինք . հազիւ քանի մը քայլ առած

էինք հանդիպեցանք մի քանի պա- հակներու, որոնց հետ խօսակցու- թիւն մը ունեցանք, անոնք փախա- լով չհամարձակեցան ուրիշներուն իմացնել, և երբ մեր խումբը ան- ցաւ, մեր վրայ կրակ ըրին, բայց ապարդիւն . մենք Սասուն հասանք ողջ առողջ :

Ահաւասիկ դէպք մը որ տեղի ունեցաւ ձմեռը, Դեկտեմբեր 22ին, Նորչէն գիւղին մէջ : Ուր զինուոր զրկած էի որոնք, մատնութեան հետեւանօք, յանկարծակիի եկան երկու հարկաւարներ և քանի մը զօրքերէ . սպաննեցին 2 կամ 3 զօրք նոյնպէս քանի մը ձիեր և ողջ առողջ վերադարձան :

ԱՆԴՐԱՆԻԿ

7 Յունուար 1902

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴՍՐՁՔ

Եւմեմի Ապստամբութիւնը

Վերջերս ինչպէս կը հաւատա- ուի ապստամբութիւնը Եւմեմի նահանգին մէջ մեծ համեմատու- թիւն ստացած է : Արդէն ժամա- նակէ մը ի վեր թուրք զինուորնե- րու գէմ մասնակի ընդհարումներ անպակաս էին Եւմեմի մէջ . բայց Դուռը կը զգուշանար խօսու- թիւններ ձեռք առնելու, գիտնալով թէ չյաջողիր ու հալածուի տարա- ծում առաջ կը բերէ : Ինչպէս կե- րեայ այլեւս ո ո է զգուշութեան պէտք չէ մնացած, ապստամբու- թիւնը արդէն տարածուէր է չա- փէն աւելի : Թուրք Պոլսէն ստա- ցած հեռագիրները իմացուցին թէ 150,000 ապստամբներ Մարթինի հրացաններով և թուրքերէն գրաւ- ուած լծղանթներով զինուած Համիտ Էտտիի հրամանին տակ ապստամբական դրօշը պարզած

են և արշաւանքի սկսած . ուրիշ հեռագիր մը Եւմեմի կացութեան ծանրութիւնը կրկին հաստատեց զատ, Սասնա քաղաքին պաշա- րուածք և վալիին ուղղապանի տարա- զով ծպտուն փախուստը իմացուց . քանի մը օր առաջ ալ անգլիական թերթերու հաղորդում էր թէ Եւմեմի մէջ ապստամբներու և թուրք զինուորներու միջեւ տեղի ունեցած ընդհարումի մը հետեւ- անօք 300է աւելի զինուոր մե- ռած են :

Այս վրդովիչ լուրերը բնակա- նապէս ի Պոլսի Եւրոպի և Բ. Դրան մէջ մեծ չփոթութիւն առաջ բե- րին : Կայսրութեան այն հեռաւոր վայրերը զօրք և ռազմամթերք հասցնելու համար թէ՛ փոխադրու- թիւն միջոցներ կը պակսին և թէ գրում՝ հայկական թուրքերու համար : Ժամանակէ մը ի վեր թուրք պե- տութեան նոր փոխառութիւն մը կնքելու ջանքերը կրկին ի դերեւ ելան : Դուռը ճարահատալ ապրա- տամբութիւնը քաղցրութեամբ և կրօնական ազդեցութեամբ զսպե- լու մտքով անցնել օր աւելի իւլե- մաներէ բաղկացեալ խումբ մը Եւմեմի զրկեց : Այս կարգադրու- թիւնը կապացուցանէ թէ Սուլ- թանը զինու զօրութեամբ արա- բական ապստամբութիւնը զսպելու իր անկարող լինելը այլեւս հաս- կըցած է : Արդէն երկար բացատ- րելու պէտք չը կայ թէ «Եւլանիկ Արաբիտ» անուանուող Եւմեմի նահանգը սահմանակից գտնուելով Ատէնի անգլիական սեփականու- թեան, հոն ապստամբապետը, Համիտ Էտտիին, թէ՛ ծովէն և թէ՛ ցամաքէն Անգլիոյցոց աջակցու- թիւնը կը վայելէ . և չէ կարելի երեւակայել թէ 150,000 զինուոր- ներէ բաղկացեալ ահեղ բանակի մը սպառազինութիւնը առանց մեծ պետութեան մը աջակցութեանը եղած լինի :

Միջերկրականի եզերքին վրայ, նահատակ Հայ ազգին պաշտպա- նութեանը համար, նաւային ցոյց մը ընելէ զգուշացող Անգլիան՝ կար- միր Ծովի եզերքին վրայ և նոյնիսկ Արաբիոյ խորերը չը թերանար իսլամ և վայրենի ժողովուրդի մը աջակցութիւն նուիրելու : Մինչ Հայերու պաշտպանութիւնը դաշ- նագիրներով, պատուոյ խոստում- ներով և իբր մարդասիրական ու քրիստոնէական պարտականութիւն մը ստանձնած էր, զօր չկատարեց . իսկ անդին չահագիտական ցած հաշիւներէ մղուած, գաղտագողի ահագին զոհողութիւններ կընէ վայրենիներու համար :

Անգլո-թուրքական իրաւունքները դարու մը մէջ է որ կապրինք :

3. Գ.

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շարաթ օրն Աղեքսանդրիայէն եր- կար հեռագիր մը եկաւ Ս. Պատրիարք Հօր, նորընտիր Թաղական Խորհրդին մնացած երկու անդամներուն՝ Իզմիրցի Էֆէնդէր Էֆ. ի եւ Պ. Մութաֆֆի ստորագրութեամբ, որք կըսեն թէ Աղք. Պատրիարքարանի Օրէնքին (*) արամադրութեան համեմատ, իրենք կը պահեն իրենց թաղականի պաշտօնը, թէեւ հինգ անդամներ հրաժարած ըլլան : Պատրիարքարանի իրաւունք ունի անոնց հրաժարականը ընդունե- լու, եւ անոնց տեղ նոր անդամներու ընտրութիւնն հրամայելու, բայց ա- նոնց հրաժարելուն պատճառաւ իրենց ընտրութիւնն ալ բեկանելու իրաւունք չկայ : Ուստի, իրենք են եւ կը մնան խնարհ ծառայք Աղքին, եւ ընտրեալ թաղականք Աղեքսանդրիոյ, եւ կը բողոքեն իրենց Ալփազեան Առաջնոր- դին ծուռութեամբ հեռագրին դէմ, ո- րուն հետեւելով Աղք. Պատրիարքա- րանը չեղեալ նկատուի է կատարուած օրինաւոր ընտրութիւնը, առանց դա-

(*) Սահմանադրութիւն գրել արգիլ- ուած է :

ԻՄ. Խ.

Ա. ՇԻՏԱՆՆԱՆ (18)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼՈՒՍԻԱ

Լուսիա կապուած էր Վանականին : Այդ վեհ ու բարի մարդը իր աչքէն չէր հեռանար, իր երեւակայութիւնէն չէր բաժնուեր... Իր բովանդակ էու- թեանը մէջ թափանցած էր անոր հրեշտակային կերպարանքը, ժամա- ըով, ժամերով անոր վրայ կը խոր- հէր, անոր անուշը կուգէր լսել, ա- նոր ըսածները կը ջանար յիշել... Երբ Վանականը վերադառնար, երբ անոր քովն ըլլար ու անոր մեծ ու տրտմալի աչքերուն մէջ նայէր, ան- զուսպ դող մը կզգար, կը տոգունէր ու չէր գիտեր՝ ի՞նչ խօսէր, ի՞նչ ըսէր...

Ասիկա առանց պատճառի մը չէր :

Մանկամարդ աղջիկը կը վախնար իր հոգին լիցնող սիրոյն նկատմամբ բառ մը խօսելու, որովհետեւ համոզուած էր թէ անձնուրաց մըն էր ան, Աղ- քային զինուոր մըն էր ան... հետեւ- ւաբար... ա՛խ, այո՛, գոցէ՛ մեր- ժուէր :

Մերժութիւն... ստակալի էր այդ : Ուստի ստիպուած էր հանդուրժել, ստիպուած էր ինք իր մէջ խղճուիլ, մաշուիլ, ու՛ խանձարուրով մը կաշ- կանդուած անլիզու մանուկի մը պէս փուճ տեղ կը ճմլուէր... մէկը չէր հասկնար, մէկը չէր զգար, մէկը չէր կրնար թափանցել անոր հոգեւոյն մէջ :

Շատ անգամ, երբ Լուսիա մինակ ըլլար իր խորունկ մտածումներու մէջ, կը տրամաբանէր ինքնիրեն :

— Ինչու համար չպիտի կրնամ սիրել Աղքին զինուորը՝ ի՞նչ բան պե- տի արգիլէ զիս անոր յայտնելու իմ զիտաւորութիւնս... միթէ՞ չըսու ինծի թէ աշխարհքս մէջ մէկը չունիմ, թէ պատանեկան տարիքէս սկսեալ թափա- ռական եղած եմ եւ թէ ընտանեկան յարկի մը անուշութիւնը չեմ զգացեր : Բովանդակ կեանքիս մէջ, Ուրեմն... բաւական չէ՛ այս խոստովանութիւնը :

Ի՞նչու կասկածիմ, ի՞նչու մաշուիմ : Բայց թէ՛ իր կողմը չպիտի ներէ աւուանանալու... իր ծանր պարտաւա- նութիւնը պիտի բաժնէ զիս իրմէն... Է՛հ, կընդունիմ : Ան ատեն երկու զինուորներ կլլանք՝ կոյս հոգիով մը իրարու փարած : Ան ատեն մեր սէրը կը կեդրոնացնենք Հայրենիքին վրայ... Այս անկեղծ տրամաբանութիւնն ա- նոր հոգիէն կը պտթկար : Ու կը վճռէր ամեն բան ըսելու, ամեն բան յայտնելու... բայց չէր կրնար, նո- րէն չէր համարձակեր :

Արդ, Լուսիա իր թաղարները խորին դառնութեամբ մը դիտե- լէ ետքը, երբ աչքերը լեցունեցան ու հառաջանքները խղիւղեցին զինքը՝ Վա- նական, ա՛խ, Վանական մրմնջե- լով : Մեծ-հայրը կեցած էր քանի մը քայլ հեռուն ու մտիկ կընէր :

— Ի՞նչու համար Վանականին վրայ կը մտածես, աղջիկ, նկատել տուաւ ծերունին՝ իր զրկին մէջ առնելով զանի :

Լուսիա շուարեցաւ . իր տրտմալի աղւոր աչքերու արցունքը չկրցաւ ծածկել . հետեւաբար ինչ ըսելը, ինչ պատասխանելը մոռցաւ այն մարդուն :

որ աշխարհքիս մէջ միակ հոգին եղած էր զինքը խնամող, զինքը սիրող ու զինքը պաշտող :

— Վանականը բան մը չունի, աղ- ջիկ, անկա ազատ է, յարեց ծե- րունին անուշ խանդաղապանքով մը :

— Ո՛հ, Մեծ-հայր, այս գիշերը շատ վէշ երազ մը տեսայ... մրմնջեց մանկամարդ աղջիկը սիրուն հնարա- մտութեամբ մը :

— Բարի՛ն ըլլայ, չեղտեց ծերունին : Բայց կիրակի օրուան երազը սուտ է, կըսեն : Պատմէ՛ նայիմ :

— Տեսայ որ հարս պանդխտութենէն վերադարձած էր : Այնքան խղճ ու ողորմելի էր անոր վիճակը, որ չեմ կրնար նկարագրել : Բոլորովին ցնցո- տինքնու մէջ թաղուած էր երկայն, անմաքուր ու ճերմկցած մազեր ու մօրուք մը ունէր աչքերը խոր ինկած ու մարած էին, կերպարանքը մեռե- լի մը գոյնը ստացած էր ու ամբողջ մարմինը չորացած ոսկոր մը դարձած էր : Երբ գոռունէն ներս մտաւ, մեր որահին անկիւնը նստեցաւ ու բան մը չխօսեցաւ : Հարցուցինք թէ Վա- նականէն տեղեկութիւն մը ունէ՞ր, պատասխանեց թէ Վանականը Պոլսոյ

նէ իրենցմէ ալ բացատրութիւն մը պահանջելու: — Շիտակն ալ բնութեամբ, 7 թաղականներէն 5 ինչո՞ւ ժառանգութեան պատճառաւ, չի հետեւիր ի հարկէ որ մնացեալ երկուքն ալ ընտրութիւնը չեղեալ նկատուի: Եթէ կատարուած ընտրութեան ապօրինութեան պատճառ մը կայ, ապա ցուցուելու էր, եւ այն ատեն քննութիւն մը պէտք էր կատարել, միմիայն Առաջնորդին մէկ հետաքրքիր վրայ հիմնուել չէր բաւեր: Ինչպէս յայտնի է, այս ուրբաթ իրաւունք ունեցողները չեղեալ զուգահեռութեամբ ժողովն հաստատեց Աղեքսանդրիոյ համար առժամային Թաղական Խորհուրդ մը կազմելու որոշումը, որ հետագայում ծանուցուած էր: Բայց խնդրոյն էութիւնն իր օրինական բացատրութեան մէջ չէ, այլ այն կարեւոր դէպքին մէջ է որ գործին մէջ կայ Պողոս Նուպար փաշային անձը, որ ընտրուած եօթնէն մէկն էր, բայց որովհետեւ Պողոս փաշայի չուզած մէկ մարդն ալ ընտրուած էր, փաշան հրաժարեցաւ, եւ անձնական բողոքին ոյժ տալու համար, չորս հետեւակներ ալ հրաժարեցան: Չէզոք եւ անկողմնակալ երկու անգամները միայն կանգուն մնացին: Աղեքսանդրիա Թաղական Խորհուրդը չի կրնար ընտրել եւ ունենալ, որչափ ատեն որ Պողոս փաշայի չուզած մէկ անձն ալ ելնէ քուէներուն մէջէն: Հետեւապէս, ամէնէն կարճ միջոցն է՝ Պողոս փաշան միւլթէվէլի կարգել Աղեքսանդրիոյ եկեղեցիին եւ յարակից վիճակներուն, եւ արտօնել զինք իր յարմար դատած անձերով կարեւոր տնօրինելու: (•)

Բիւզանդիոն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսից Շահը Պագուէ անցած միջոցին զինք դիմաւորող հայ երեւելիներուն շատ սիրալիր ընդունելութիւն ըրած է:

— Պոլսոյ Բիւզանդիոն մեծ հայաթերթը Մէարիֆի հրամանով անպայման ժամանակի համար գաղթած է: Այդ թերթի Տնօրէնը Տ. Բիւզանդ Քէչեան հակառակ

իր այնչափ զգուշ ընթացքին, իբրեւ թէ օրէնքը հակառակ վարուած է եղեր: Բիւզանդիոնի մինչեւ անցեալ շաբաթ օրուան թիւերը ստացած ենք, որոնց մէջ ապօրինի նկատուելիք տող մը կարեւոր գտնելու համար ընդունայն պրպտումներ ըրինք:

— Պոլսոյ Պատրիարքարանի խառն ժողովը Նպատակից Յանձնաժողովոյ հրաժարականը ընդունած ըլլալով, նոր Յանձնաժողովոյ մը կազմութեան համար ընտրելիներու ցանկին պատրաստութիւնը Պատրիարքին և Տ. Վահրամ Սրբազանի յանձնած է:

Ինչպէս ծանօթ է մեր ընթերցողաց, որքանոցները արհեստանոցներու վերածելու ծրագիր մը կար, նաեւ Պոսէն և ուրիշ տեղերէ զ'իւրած նպաստներու միջոցաւ կառավարուող կարգ մը գաւառային վարժարաններու խնամակալութիւնն այդ յանձնաժողովոյ կը պատկանի, որ ըսել է «հանգօցեալ» Միացեալ Ընկերութեան պակասը ըստ կարի լեցնելու կոչուած է: Հետեւաբար նոր ընտրելի Յանձնաժողովը մնալուն մարմնոյ մը հանգամանք կը ստանայ: Ուստի խառն ժողովը որոշած է որ իր անդամներէն ընտրելիներ չը ներկայացուին, քանի որ այդ մարմինը համարատու պիտի ըլլայ վարչութեան:

— Պուլկարաց Ամեն. Էկզարքը անցեալ շաբաթ օր Ազգ. Պատրիարքարան փոստէ է փոխադարձ շնորհակալութիւն յայտնելու մեր Պատրիարքին, որ իր Յօդուանին առթիւ պատգամաւորութիւն մը զրկած էր Ֆէլէրի Պուլկարաց եկեղեցին, և ինք անձամբ Օրթագիւղ գոսցած էր Էկզարքը շնորհաւորելու համար:

— Կրեւտէի հայ քահանայ Պոլիս մեկնելու առթիւ, Հանեա հանդիպեր և տեղւոյն ազգայինները հա-

ղորդելու համար, դիմում րբեր է յոյն երէցին, որպէս զի յոյն եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցանէ: Բայց մերժուել է, որով հայ քահանան ստիպուած մասնաւոր սրահի մը մէջ կատարել է արարողութիւնը: Այս դէպքը Ազգ. Պատրիարքարան ծանուցուած ըլլալով, այս վերջինն Յունաց Պատրիարքին ուղարկութեան պիտի յանձնէ եղբարայր պարագան, որպէս զի պաշտօնական կարգադրութեամբ մը ալիւս վերջ տրուի այս տեսակ ընդդիմութիւններու երբ երկու ազգերու Պատրիարքները քրիստոնէական սերտ հղբարութիւն կը հաշակեն երկու եկեղեցիներու միջեւ:

— Զատիկի առթիւ Երուսաղէմ գտնուող բոլոր ուխտաւորներու թիւը 14,000ի կը հասնի եղբար, որոնցմէ 10,000ը Ռուս, 780ը Հայ, 500ը Ղպտի և Ասորի, 3,800ի մօտ ալ յունադաւան ազգութիւններէ:

— Այժմ Իտալիոյ գտնուող Տէրունեան Տ. Մաղաքիա եպիսկոպոսը խնդրած է Պատրիարքարանէ որ Պուլկարիոյ հովուութիւնը իրեն յանձնուի: Պատրիարքարանը պատասխանած է թէ խառն ժողովը որոշմամբ նոյն պաշտօնը արդէն յանձնուած է Տ. Վահան Ծ. Վրդ. Թակոբեանի:

— Հայրենիքի մէջ կը կարգանք հետեւեալ նամակը.

«Մարտի 14 փետր. 1902. — Սոսկալի վտանգ մը անցնելէ ետքն է որ այս տողերը կը գրեմ:

«Սերաստիոյ կուսակալութիւնը բախտին բերմամբ մեծ ջարդէ մը ազատեցաւ: Կուսակալը իր իրաւասութեան տակ Նոյլ բոլոր գալմագամներուն ընդհ. ջարդի մը պատրաստութեան հրամանը կը խրկէ: Հաւաքայի գալմագամը չեմ գիտեր պատասխանատուութեան ծանրութենէն ստիպուած թէ բա-

րեստութիւնէն մղուած — կեդրոնական կառավարութեան կիմացնէ եղած հրամանը և կուզէ իմանալ թէ բարձրագոյն մատ մը կա՞յ այս խնդրին մէջ:

«Սեղի անմեկնելի բարեբախտութեամբ մը վերէն կարգիւրի կոտորածը ու զինուորականներուն կը հրամայուի պաշտպանել քրիստոնեայ ազգաբնակչութիւնը:

«Սեղի եղածէն բան մը չպիտի գիտնայինք, բայց օրին մէկը յանկարծ քաղաքը պաշարուեցաւ զինուորներէ վտանգի առջեւ առնելու: անկէ ետք իմացանք խընդիրը:

«Կրտսի թէ կեդրոնը լուր չէ ունեցած: Խնդիրը ծրագրուած է կուսակալի և ալայ-պէյի միջեւ:

«Քիչ ետք այդ երկու պաշտօնեաներն ալ մեռան: զրոյց կը շըջի թէ վերին հրամանով թունաւորւեցան: Բայց կրնայ ըլլալ որ իրենք զիրենք թունաւորած ըլլան»:

— «Վէսէլլօ» հայ դերասանական խումբը երէկ քաղաքս ժամանեց: և վաղուքն սկսեալ ամբողջ ամառը թատրոն «Պօրիս»ի մէջ ներկայացումներ պիտի տայ:

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

Յանձնակատար

Պատիւ ունիմ պատ. ազգայնոց յայտարարելու թէ՛ Վառնայի, Շուվայի եւ Ռուսլուքի մէջ յանձնակատարութեան երթեկութեան սկսած եմ, անպայման վստահութիւն, ապրանքներու գինները խիստ դուրսմատ չելի եւ յանձնարարութիւնները պիտի կատարուին արագ եւ շատ ճշգրտութեամբ:

Հասցէ՝

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

Վառնա

Իսկ Ռուսլուք մեր կեդրոնատեղին է Գալֆեան եղբարց խանութը:

մէջ զլիսատուած էր... Այս յայտնութեանը վրայ խղճուեցայ ու՝ ճիշդ մը հազիւ արձակելով՝ արթնցայ...

Ծերունին, որ գողդալով մտիկ կընէր, չկրցաւ իր արցունքները զսպել: Ա՛խ, արցունքի տաք կաթիլներն անոր թօշնած ու սոճոյն այտեւրէն սկսան վար թափուիլ առատ յորդումով մը:

— Լուսիա... միմիջեց ծերունին գրեթէ սրտայայտ ու վշտալից ձայնով մը: Սիրելի աղջիկս, մի՛ ծածկեր ինչէ: Ես աղէկ գիտեմ որ քու հոգին լեցուած է... աղէկ գիտեմ որ դուն կը սիրես վանականը: Բայց չես ըսեր, չես ուզեր յայտնել... չես համարձակիր: Հիմակ որ առիթն եկաւ, հիմակ որ աշխարհքի մէջ ինչ ուրիշ մը չուրիս գրկիդ մէջ, հիմակ որ մայրդ ալ կորսնցուցիր այլեւս մի պահեր... բէ՛ ինձի, արգեօք սխալած եմ... չե՞ս սիրէր Վանականը:

Լուսիա գունատ, այլալոյս ու յետին ծայր խռովայնոյ դէմքը կուրծքին վրայ ձեռն, զոդդա՞ց, ձեռքը ճակտին տարաւ ու միմիջեց:

— Այո՛, կը սիրեմ... զինքը, Մեծ հայր:

— Ինչու ուրեմն կը ծածկէիր ինչ: — Ո՛հ, ինչ ըսէի... անիկա չէր հասկնար... անկից բան մը չանցաւ հոգեւոյ մէջ:

— Անհոգ եղի՛ր: Վանականը պիտի սիրէ քեզ, Երբ իր պարտականութիւնները կատարէ, մեր քովը պիտի ըլլայ: Դուն անոր երջանկութիւնը պիտի ըլլաս, ան ա՛լ քուկդ: Հաւատա՛ ինձի:

Մանկամարդ աղջիկը չպատասխանեց: Փափուկ ձեռքը վարդի թաղարին երկնցուց ու դեռ նոր կոկոնէն բացուած վարդ մը բրցնելով սկսաւ անոր թերթերը փնտռել:

Ծերունին անզուսպ գորովանքով մը գրկին մէջ առաւ մանկամարդ աղջիկն ու համբուրեց:

— Կը յուսամ թէ այսօր կամ վաղը կը վերադառնայ անպատճառ, ըսաւ ծերունին: Հիմակ Մէլիք ազատօրէն Պարսկաստանի սահմանը կտրած ըլլալու է:

— Կըսէր թէ՛ տասներկու տարեկան աղջիկ մը ունի եղբոր, Մեծ հայր, ընդհանրեց Լուսիա աչքերուն արցունքը սրբելով, ո՛ւր թողուց... որո՞ւ յանցնուեցաւ:

— Առ այժմ ապահով ձեռքերու մէջ կը գտնուի: Տեսնե՛ք, թող ժամանակ մըն ալ անցնի, անկից վերջը քովդ կը բերենք:

— Ա՛խ, որչափ երջանիկ պիտի ըլլամ, անանկ չէ՞, Մեծ հայր, երբ անիկա քովս գայ ու քրոջ մը պէս սիրենք զիրար:

— Հապա՛, աղջիկս, վրայ բերաւ ծերունին:

Ու անգամ մըն ալ այդ պաշտելի աղջիկը համբուրելով իր գործին գնաց, սիրտը ելած տղու մը պէս:

Լուսիա միմիջեց:

Ո՛հ, ա՛լ սիրտը պարպուած էր, ա՛յ հոգին իր դառնութենէն դուրս ելած էր... ու իր բովանդակ էութիւնը՝ միմիջեց ու բարդ ամպերու տակէն երեւցող կապոյտ երկնքին պէս, երթալով կը բացուէր, կը վճիռնար՝ անուշ ու խնկարոյր մշուշի մը մէջ:

Որբունէն, որ մանուկ հասակէն իր հայրը կորսնցուցած էր ու այսօր ալ մօրմէն կը զրկուէր անդարձ կերպով մը, վայրկեան մը սփոփուեցաւ ու աշխարհքը անո՛ւ, երեւցաւ իրեն: Ու բոլոր օրը սրտաղէղ բառերով

մենախօսութիւններ ըրաւ ու տնական գործերը կարգադրեց:

Իրիկուան դէմ Մեծ հայրն եկաւ: Լուսիային վրայ նայեցաւ հիացումով մը ու ժպտեցաւ: Այդ ժպտը ուրախութեան ամբողջ արտայայտութիւնն էր:

Երկուքն ալ ուրախ զուարթ ճաշելու նստած էին, երբ պարտէզին մէջ խշրտուք մը լսուեցաւ: Ծերունին անմիջապէս դուռը բացաւ եւ պարտէզն եկաւ:

Մութին մէջ երիտասարդ մը իրեն մօտեցաւ: Ծերունին անոր երեսը նայեցաւ ու ճանչցաւ: Եկողը Վանականն էր:

— Ա՛հ, դո՛ւն ես, զաւակս, միմիջեց ծերունին:

— Ե՛ս եմ, հայր, թոթովեց Վանական:

Լուսիա, որ չէր կրցած սպասել ու Մեծ հօրն ետեւէն եկած էր, մօտեցաւ Վանականին ու գողդալով անոր ձեռքը սեղմեց:

Երեքն ալ ճաշի սեղանը նստեցան:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՑԷ

ԹԻԻՐՔԻԱ

Թիւրքիան զորհարարներ պիւր-
էշտիւրմէք վէ Տիւրքիոյ Ուսու-
միյէ մուսուլմաններն տէրէթէ
մէնթաթիւր սուրէթտէ ճէրէնանը
իշիւն պիւր ուսուլ թալիս ու թէր-
թիպ իթմէք մաքսէտի իլէ, Մ.
Րուվիէնին թանգիւմ իթմիշ օլտըզը
ճէտվէլ կէշէն հաթիթ հէյէթի
վիւթէլատան գապուլ օլընմը ի.
քէն, էլան Սուլթանտան թաստիգ
օլընմամը տըր:

Պիր վագրթտան պէրու Պանգ
Օթօմանտան վէ սայիր էճնէպի
պանգալարտան հէնի պիր իսթիգ-
րազ իթմէք իշիւն Սատրազմըն
վէ Մալիյէ նազըրընն սայ ու
զայրէթի պօշա չըքմը տըր:

— Բուս էհալիսինն ճէհալէթ
սէպէպի իլէ թասսուպարը քէվ-
գէլատէ օլտըզընտան, օլմալաճազ
շէլէրէ իման իթմէք, ինանմազ
վէ թաքընմազ տէրէճէսինն գա-
տար իլէրի կիտէյօրլար:

Սթանպօլտա Ալթը Մէրմէր քի-
լիսէսինն պուլընան Ս. Աստուա-
ժաժին րէսմինտէն կէօնա պէօլիւք
միւսիւզաթլար հասըլ օլտըզընա
տայիր Բուսլար պէնինտէ պիր
թէվաթուր հաքըլմըլ օլուպ, Սթան.
պօլըն հէր թարաթընտան պիւրէր-
ճէ գատընլար խընճախընճ հէր
կիւն օլ քիլիսէյէ տօլմագտա վէ
մէզքիւր պատկերէ բուլթ կիպի
թարընմագտա ըմըշար. վէ բա-
բապար էհալիսին պու խահիշին-
տէն իսթիֆատէ իտէրէք, պիր
խաչահանգիստ օգուլմազ իշիւն
70—80 զրուշ բարա թօրլամագտա
վէ էհալիսի պիլէթլէ իշէրի ալ-
մագտա օլտըզլարընտան, Բուս
Բաթրիգհանէսի պիր գաշ տէֆա
րէսմի իլաննամէլէր նէշը իտուպ,
էհալիսի պու եանլըլ թարիգտէն
գուրթարմազ իսթէմիշ իսէտէ
ֆայիտէ իթմէմիշ տիր:

Կէշէն ճուսա կիւնիւ թէքրար
Բաթրիգհանէսի եհնի պիր իլան նէշը
իտէրէք, պուստա Ճէնապը հազ-
զըն լուլթի վէ քէրէմինն մէճճա-
նէն մազհար օլուստըզը պէյանտան
սօնրա, Ալթը Մէրմէրտէ վուգու
պուլան միւսիւզլէրին հազըգաթը-
նա տայիր քիլիսէճէ գանաթ հա-
սըլ օլմաթըզը իլան օլընմըլ վէ հէր
կէօնա ինթիգալմազըլըն էօնիւ
ալընմազ իշիւն, Ալթը Մէրմէր
քիլիսէսինն սապահ վէ ազլամ
եալընը քիլիսէսինն էսնասընտա
աշըլաճաղը պիւրիւրիւմիշ տիր:
Ալիստէն սօնրա Աստուաժաժին
պատկերի էօնիւնտէ իքի իտաչա-
հանգիստ վուգու պուլաճազ, վէ
քիլիսէն պատկերէ եազլաճաղը-
նա միւստէ օլընմալաճազ տըր:
Բարա թօրլանմաթ տալիս գա-
թիւն մէնն օլընուպ, մէզքիւր քի
լիսէնն բաբապարը տալիս Բաթ-
րիգհանէսին էմրի իլէ մէմուրիլէթ-
տէն չըքարմըլ վէ քէնտի մէմլէ-

քէթլէրինն կէօնտէրիլմիշէր, վէ
օնլարըն եհրինն պաշգալարը գօ-
նըլմըլ տըր:

— Սէլաիկ իսթինաֆ մաշքէ-
մէսի պուլկարլարտան 85 քիշիլի
101 սէնէյէ վէ 103 քիշիլի 3 սէ-
նէտէն 10 սէնէյէ գատար մաշպու-
սիլէթէ մաշքիւմ իթմիշ տիր:

— Սուլթան Մարթինիք ատասը
ֆէլաքէթլագտէկեանընա իանէթէն
20,000 ֆրանգ վէրմիշ տիր: Յրան-
սա էլիսի Մ. Գօնսթան պու իանէ-
տէն տօլար Սուլթանա արզը թէ-
շէքքիւր իթմիշ տիր:

Բաբա տալի 20,000 ֆր: իանէ
վէրմիշ տիր:

ԲՈՒՍԻԱ

Բուսիանըն պազը թարաֆա-
րընտա ըսեան գըրգըր գալըրշրգ-
լըզլար վուգու պուլմուշ օլտըզըն
տէֆաթլէ եազմըլտըր:

Էհալիսինն էֆքեարըն թէսքին
իթմէք մաքսէտի իլէ վէ թէհտիտ
եօլլու հիւքիւմէթ թարաֆընտան
կազէթալարա րէսմի իլաննամէլէր
վէրիլմիշ տիր: իշպու իլանաթ իլէ
հիւքիւմէթ խարքով վէ Պալտա-
վա վիլայէթլէրինտէ վուգու պուլ-
մուշ օլան իսթիլալը խաֆիֆճէ
թատատ իտէրէք, էհալիսին ֆա-
գիր վէ գըրթլըգտան աճ գալմըլ
օլտըզըն սէպէպ կէօսթէրուպտէ,
պազը ֆէստաճըլարըն թէշիլգի
իլէ պիր թազըմ չիֆիլքէրի պաս-
մըլ վէ անպարլարտաքի զախիւրէի
եազմա իթմիշ օլտըզլարըն կէօս-
թէրիլար: վէ պուստան մատա-
քէօլլէրի կէզուպ, հիւքիւմէթէ
գարը իսթիլալ գալտըրմազ ի.
շիւն էհալի պէնինտէ քօրուպանտ
իտէն թէշիլգիլէրին վէ տիկէր
ֆէստա պաշը օլան քէսանըն տէր-
տէսթլէ ճէպի սէզալարընա ուզ
րալաճաղարըն, վէ պուստան
պէօլլէ էմիլիլէթ ու ասալիշին իպ-
գասը իշիւն գուլթիլէրի գապըթէ.
նին արթըրըլտըզըն վէ նիհայէթ
ղայրը տիւնեա սիւտ իլիման օլա-
ճաղըն () իլան իթմիշ տիր:

— Յրանսա ճիւհուրիլէթ րէյիսի
Մ. Լուպէ Բուսիայա սէյահաթտա
պուլընուպ, Բէթրօլսօպտա Չար
պիլզաթ գարշըլմըլ վէ պէրա-
պէր Ծարսքա Սէլօյա կիթտիթէն
սօնրա, Մ. Լուպէ Չարըն վալի-
տէսի Մարիա Յիօտօրօլմայա տա-
լի զիլարէթ իթմիշ, վէ թէքրար
Չարըն սէյիլիսինն ալտէթ էլիւ-
միշ տիր: Օ ազլամ քէշիտէ օ-
լընան զիլաֆէթի մախսուսէտէ
Յրանսա վէ Բուսիա նամընա պիր
թազըմ իտարէի ագտահ իտիլմիշ,
եանի գալպ քօլիթիգալար վուգու
պուլմուշ տըր:

ՇԱՀՆԵՆ ԵՕԼՃԼԼԸՂԸ

Աճէմ Շահընըն Բագուտան կէշ-
մէսի մինասիպէթլէ, իրան հիւ-
քիւմաթընը հիւանի գապուլ իշիւն
Բագու պէլէտիլէսի 30,000 րուպի
թախսի իթմիշ օլտըզըն թիֆ-
լիս կազէթալարը եազըլարար:
Սուլթաֆէր-Էտտին Շահ մայէ.

Թինտէ 34 քիշի պուլընտըզը հալ-
տէ Ապրիլ 26տա Բագու սթասիօ-
նընա վաւըլ օլուպ, րուս մէմուր-
լարը վէ շէհրին էրմէնի վէ Աճէմ
միւթէպէրանը թարաֆընտան գար.
շըլանմըլ տըր: Շահըն կէշէճէկի
սօգազլար աճէմ խալըլարը վէ շալ-
լարլէ վէ րուս վէ իրան պանտէ-
րալարը իլէ տօնաթըլմըլ օլարագ,
Շահ քէմալը սալթանաթլէ կէ.
շալպ, միլլէթտալարմըզտան նամ.
տար թիւճար Մ. Թուսանանըն
խանէսինն գօնաք իթմիշ տիր:
Ազլամ քէշիտէ օլընան զիլաֆէթ.
տէ, Ատրպատական էրմէնի մու-
րախասը վէ վէքիլի տալիս հազրը
պուլընարագ, Չարըն, Շահըն
վէ Ս. Կաթիլիկոսըն էօմր ու իգ-
պալարը իշիւն պատէլէր նուշ վէ
իտարէի ագտահ օլընմըլ տըր:

Շահ հազրէթլէրի Ապրիլ 28 տէ
մայէթտէ պուլընան զէվաթըն րէ-
ֆապաթը իլէ վէ թրրէնի մախ-
սուսլէ Բագուտան մուֆարագաթ
իտուպ, Բոստով թարիգի իլէ
խարիճէ կիթմիշ օլտըզը մաշէ.
լինտէն պիւրիլիլար:

— Սուլթաֆէր-Էտտին Շահ կէ-
շէն կիւն Վիէննատան կէշուպ վէ-
նէտիկէ կիթմիշ վէ օրատան Բօ-
մայա եէթիշուպ գրալըն սէրալըն.
տա միսաֆիր օլմուշ տըր:

ՍԵՐՊԻԱ

Սերպիանըն վիւքէլար իսթի.
ֆա իթմիշ օլուպ, եհնի գապիլէ-
նին թէշքիլի Տօք. վուլիշէ իհալէ
օլընմըլ տըր:

ԲՈՒՄԱՆԻԱ

Պուգրէշտէ նէշը օլընան Ալպա-
նիա նամ կազէթալար մուհարիլէ-
րինտէն Սատրգ էֆէնտինին էվրագ
վէ մէքթուպարընն զապթ օլըն-
տըզըն Պուգրէշ կազէթալարը
եազմըլտըր տըր:

Քէշա Բարիստէ թէճէմմիւ օլը-
նան կէնճ թիւրքլէրին գօնկրէ-
սինն կիթմիշ օլմաթ սէպէպիլէ
Շէյիւ Ճէլալէտտին նամ զաթըն
տալիս իսթինթագա ալընմաթը,
վէ քէօստէնճէտէ թիւրք մէքթէպի
հօճալարընտան պաղտատըր Ալաէտ-
տին նամ շախսըն Բուսիանտան
իլարաճ իտիլտիկի կազէթալարտա
կէօրիւմիշ տիր:

ՉԻՆ

Բէքինտէքի ինկիլիզ էլիսի Չին
հիւքիւմէթի իլէ պիր շրմէնտրֆէր
մուգալէլէնամէսի իմզալատը. Բուս
էլիսի պու մուգալէլէլէ գարըն
քրօթէպթ իթտի. տիկէր էլիլէր
տալիս քէնտի տէվլէթլէրինտէն
թալիմաթ իսթէտիլէր: Էկէր ին-
կիլիլէր պու մուգալէլէ իւզէրինն
իտտաա իտէրսէլէր, Բուսլար տալի
Մանչուրիան չըքմալաճաղա-
րըն պէյան իտէյօրլար:

ՄԻԻԹԵՆԷՎԼԻԹԷ

Մարթինիք ատասընտա Բըլէ
նամ եանար տաղ էլան եանմագտա
վէ ալէֆլէնմէքտէ տիր: Սէն Բիէր
շէհրին վիւրանէլէրի ասքէր գօր.

տօնը ալթընա ալընմըլ տըր: զի-
րա ճիվարտան չօգ քիմէնէլէր
թօրլանուպ, երգընթըլար ալթըն-
տան գըլմէթտար էշեալար գալ-
տըրմագտա ըմըշար:

Հէր թարաֆտան Յրանսայա
խանէլէր հօլլանտըր կիպի, Յրան
սատան վարօրլարէ հէր կիւն էշեա
վէ էրզագ կէօնտէրիլմէքտէ տիր:

ԹԻԻՐՔԻԱ

ՎԱՌՆԱ, 10 Մայիս
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալոն լիպ. 49.53 հքթ. 7.—/ 8.—	
Արապա լիպ. 48—58 հքթ. 8.—/ 10.40	
ԱՐԲԱ	
Վալոն 100 քիլո 10.40/10.60	
Արապա 35—45 լիպ. հքթ. 7.—/ 7.20	
ԵՌԻԼԱՅ	
Վալոն 100 քիլո 13.—/ 13.20	
ՅԱՍՈՒԼԻԱ 100 քիլո 10.—/ 18.—	
ՉԱՎՃԱՐ 7.80/ 8.—	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 54—58 հքթ. 7.30/ 8.—	
Վալոն լիպ. 100 քիլո 9.80/ 10.—	
ՏԱՐԸ 8.20/ 8.40	
Կիւնտէ 2-3 Վալոն կէլէքտէ տիր:	
Վալոն մուսմէլէսի ալթուշ ֆը- րանքլէ, արապա կիւմիլլէ: Նաթօ- լէտն 22.40 հիսապը իլէ:	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղազաթընտա իլիք սա- թըլարը:	
Ինկիլիզ իլիլիկ Ն. 8-14 10.—	
» » Ն. 18-24 12.—	
ԵՒՐԻ ԻԼԻԷ Ն. 8-14 9.30	
Աթըլմըլ բամուք հօդա 1.80	
Բապուլ ֆիլաթլարը Էիւքսէլմէք- տէ տիր:	

ՍԱՐՐԱՅԻԹԷ

Նաթուլէտն 22.40 ֆրանք
Օսմ. լիւսար 22.90 ալթուշ ֆրանք

ՊԱԳՄԱԼԻԹԷ

Վարնա բիւցաթընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը: ալ- թուշ ֆրանք իլէ:	
ԳԱՇՎԷ 1.50/ 1.70	
Շէֆէր Նէմցէ 51	
» (Գէսմէ) սանտըգ 27.20	
Բիլիլն Ճարոն չուլալը եօգ —.—	
» Ֆիլիպէ » 31.—	
» Ինկիլիզ » 25.26	
» Բիգօն » 45.—	
ԿԱԶ Սանտըգը 6.70	
Չէթիլն ԵԱՂԸ քիլո —. 85/— 90	
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՄ —. 40	

ՎԱՐԺԱՊԵՏ ԿՈՒՋՈՒԻ

Տօպրիլի Ազգ. վարժարանի ուսու-
ցիլը հիւանդութեան պատճառաւ
հրաժարած ըլլալով, այժմ տեղւոյն
յարմար ուսուցիչ մը կուգուի:
Դիմել տեղւոյն հոգաբարձութեան:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՆ

Եթէ կուգէք հազնիլ կօ-
շիկներ որոնք իրենց վրայ
միացուեն ձեռի եւ գիմաց-
կունութեան կատարելու-
թիւն եւ մանաւանդ գինի
չափաւորութիւն, առանց վարանելու
զիւնցէք Ս. Պօրապանտանի. Մու-
սալա, Տօքթ. Պասալօվիլի տանը
գիմաց:

Одговорникъ Н. Драгулевъ
Печ на Хр. Н. Войняковъ—Варна